ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360 Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.02.2012թ.
157-ի 1

"Դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն" ՓԲԸ-ի տնօրեն պարոն Վարդան Թոփչյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Թոփչյան,

Մեզ է դիմել քաղաքացի Էդգար Հակոբյանը՝ խնդրելով օգնել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում: 2012թ.-ի հունվարի 23-ին նա գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ է վիտամինը (խնդրում եմ պարզաբանեք վիտամինի նշանակությունը, էությունը, մարդու օրգանիզմում նրա կողմից կատարող ֆունկցիաները, նպատակը, ինչպես նաև հիմնական կազմությունը):
2. Վիտամինները ներառվու՞մ են արդյոք ՀՀ «Դեղերի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված «դեղ» հասկացության մեջ:
3. Վիտամինները դեղերի պետական գրանցամատյանում որպես ի՞նչ են գրանցվում՝ դե՞ղ, թե՞ վիտամին:
4. «Դեղերի բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն ինչպիսի՞ վերահսկողություն է իրականացնում ՀՀ-ում առկա վիտամինների շրջանառության, մասնավորապես պետական գրանցման նկատմամբ:
5. Ո՞ր իրավական ակտերի վրա է հիմնվում «Դեղերի բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի վերահասկողությունն ՀՀ-ում վիտամինների շրջանառության նկատմամբ:
6. ՀՀ-ում գրանցված ՍՊԸ-ն ինչպիսի՞ թույլտվություններ պետք է ձեռք բերի, որպեսզի ՀՀ-ում զբաղվի վիտամինների արտադրությամբ և վաճառքով:
7. Օտարերկրյա պետությունից ՀՀ ներկրած վիտամինների վաճառքով զբաղվելուց առաջ օտարերկրյա ներկրող կազմակերպությունը կրու՞մ է արդյոք ՀՀ-ում դրանք գրանցելու պարտավորություն, և եթե այո, ապա ի՞նչ ընթացակարգով է դա կատարվում և որտե՞ղ է վերոգրյալ գրանցումը կատարվում:
8. ՀՀ-ում "X" ապրանքային նշանի ներքո գտնվող և "X" տեսակի վիտամինի ավելի վաղ գրանցման առկայությունը կարո՞ղ է արդյոք օտարերկրյա ներկրող կազմակերպության վերոգրյալի հետ նույնական ապրանքային նշան ու տեսակ ունեցող վիտամինի գրանցման հայտը մերժելու հիմք ծառայել:
9. ՀՀ-ում օտարերկրյա պետություններից վիտամինների ներմուծման և ՀՀ-ում այդ վիտամինների վաճառքի իրավունքի ստացման ինչպիսի՞ ընթացակարգ է սահմանված:
10. ՀՀ օրենսդրության կողմից սահմանվա՞ծ է արդյոք վիտամինների գովազդի թույլտվություն ստանալու կարգ, եթե այո, ապա ո՞ր իրավական ակտով է այն սահմանված:

Սակայն նա որևէ գրավոր պատասխան չի ստացել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ ևս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գևորգ Հայրապետյան